



Իջևանի Օրհուս կենտրոնի 2013թ.

կատարած աշխատանքների տարեկան

հաշվետվություն

/հունիս-նոյեմբեր/

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

Իջևանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրինա) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է հունիսի 5-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Իջևանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 25 միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Միջոցառում Քանակ 25

Անվանումը	քանակը	տոկոս
Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ	4	-
Հանրային լսումներ	7	-
Գործնական աշխատանքներ և արձագանքներ	11	-
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	15	-
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	12	-
Շնորհանդես	0	-
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	0	-
Փորձագիտական խորհրդի նիստեր	2	-
Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	369	-
ՀԿ ներկայացուցիչները	24	6.5%
պատանիներն ու երիտասարդներ	159	43%
ԶԼՄ ներկայացուցիչներ	7	2.6%
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	66	17%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	113	30.6%

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է մարդ: 105

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Կենտրոնի ծառայություններից հիմնականում օգտվում են ԵՊՀ ԻՄ ուսանողները և այլ քաղաքացիներ

հունիս	14
հուլիս	16
օգոստոս	9
սեպտեմբեր	21
հոկտեմբեր	24
նոյեմբեր	22

ԶԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/

Կենտրոնը ակտիվ համագործակցություն է վարում ԶԼՄ-ների հետ, լուսաբանում է Իջևանում և գյուղական համայնքներում իրականացված բնապահպանական միջոցառումները, խախտումները, վեր հանում էկոլոգիական հիմնախնդիրները:

Փորձագետների խորհրդի նիստ /քանի անգամ, ինչ է քննարկվել, տարեկան պլաններ/

Հիշյալ ժամանակահատվածում տեղի է ունեցել փորձագիտական խորհրդի մեկ նիստ: Փորձագիտական խորհուրդ հաստատելու համար զեկուցմամբ հանդես եկավ Օրհուսի իջևանի կենտրոնի համակարգող Դավիթ Ղազարյանը՝ ընդգծելով ռազմավարական պլանի և առաջնային խնդիրների վերհանումն ու հաստատումը: Փորձագիտական խորհրդին մասնակցություն ունեցան նաև ԵՊՀ ԻՄ բնապահպանության և բնօգտագործման բաժնի 4-րդ կուրսի ուսանողները, որոնք հանդես եկան էկոլոգիական հիմնախնդիրների վերհանման սեփական տեսլականով՝ առաջարկելով խորհրդի և ընդհանրապես կենտրոնի աշխատանքն ավելի օպտիմալացնել՝ համագործակցելով համայնքների և հասարակական, պեական կազմակերպությունների հետ:

Խորհրդի անդամների վերհաստատման և փոփոխությամբ կրկին հանդես եկավ Գ. Ղազարյանը և բաց քվեարկությամբ կայացավ խորհրդի նախագահի ընտրությունը և նախագահ ընտրվեց Տավուշի մարզպետարանի աշխատակազմի գյուղ. և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի վարիչ Սամվել Գևորգյանը: Խորհրդի անդամները և նախագահը պատրաստակամություն հայտնեցին համագործակցել և կայուն զարգացում ապահովել մարզի էկոլոգիական խնդիրների վերհանման և լուծման ուղղությամբ:

2. Օրագրի իրագործումն քստ դրված նպատակների,

2.1 ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրինուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

2.1.1 կատարված գործողություններ

Համայնքներում իրագրության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր: Կազմակերպվել է հանրային քննարկում <<Իջևանի համայնքային աղբահանությունը>> թեմայով: Պարբերաբար այցելություններ են կատարվում համայնքապետարաններ, ստեղծում նախնական պայմանավորվածություն, էկոլոգիական խնդիրների իրագրության և իրավաչափ լուծման ակնակալիքով:

2.1.2 Ձեռք բերված արդյունքներ:

Այս ընթացքում որպես հիմնական արդյունք կարող ենք դիտարկել բնակչության իրագրվածության մակարդակի բարձրացումը, սեփական շահի ու հանրային շահի տարանջատումը, ինչպես նաև քաղաքացի-պետական մարմիններ հարաբերությունների համահարթեցումը:

2.2 ՆՊԱՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

2.2.1 կատարված գործողություններ,

Կենտրոնի համակարգողը պարբերաբար հանդիպումներ է ունենում տեղական պետական մարմինների հետ, փորձում ճշտել կոնվենցիայով նախատեսված իրավանական դաշտնի լինելիությունը, իսկ բանավեճերն ու բազմապիսի նմանատիպ միջոցառումները կազմում են կենտրոնի առօրյա անբաժան մասը: Աշխատանքային հանդիպում ՀՀ ԱՆ ՊՀՀՏ Տավուշի մարզային պետ Բ. Թումանյանի հետ:

2.2.2 Ձեռք բերված արդյունքներ:

Որպես արդյունք Պայմանավորվածություն ձեռք բերվեց համատեղ մոնիթորինգ իրականացնելու և բնապահպանական խնդիրների լուծման այլընտրանքային որոնման ուղղությամբ:

2.3 ՆՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լուսմներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

2.3.1 կատարված գործողություններ,

Այս խնդրի իրականացման համար կազմակերպվում են բազմապիսի միջոցառումները, որին մասնակցում են ինչպես համալսարանականներ, այնպես էլ քաղաքացիներ:

Կազմակերպվել է քննարկում՝ «Իջևանի Սպիտակ լիճը որպես էկոլոգիական հիմնախնդիր» թեմայով, որին կրկին մասնակցել են ԵՊՀ ԻՄ ուսանողներ և դասախոսներ: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանում կազմակերպվել էր բանավեճ «Էկոկրթության հիմնախնդիրները» թեմայով:

2.3.2 Ձեռք բերված արդյունքներ:

Բանավեճի և քննարկման ընթացքում իրենց շարժուն մտքով ու գործնական առաջարկներով հանդես եկան ինչպես դասախոսական կազմի ներկայացուցիչներ, այնպես էլ ուսանողները:

2.4 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերահանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն):

2.4.1 կատարված գործողություններ,

Պարբերաբար այցելություններ են կատարվում համայնքապետարաններ: Այցելություն Տավուշի մարզպետարան, հանդիպում Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության աշխատակազմի ներկայացուցիչների հետ:

Այցելություն Իջևանի քաղաքապետարան, հանդիպում փոխքաղաքապետ Սուրեն Մանուկյանի, կոմունալ բաժնի աշխատակիցների հետ:

Այցելություն Բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին և այլ գերատեսչություններ:

2.4.2 Ձեռք բերված արդյունքներ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համայնքի գերակա խնդիրները, դրանց առաջնահերթությունն ու լուծման ուղիները: Գերակա հիմնախնդիրների վերհանում, բնապահպանական խնդիրների քննարկում, խախտումների գրանցում և այլն:

2.5 ԼՊԱՏԱԿ 5

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է Էկոկրթական դասընթացներ:

2.5.1 կատարված գործողություններ,

Էկոկրթությունը կենտրոնը հիմնական առաքելություններից է, որի շրջանակներում կատարվել են բազմաթիվ միջոցառումներ, սեմինարարներ, ինչպես ուսանողական, այնպես էլ աշակերտական լսարանների համար:

Այցելություն Բջնանի թիվ 1 հիմնական դպրոց, որտեղ կենսաբանության ուսուցչուհի Ա. Մեհրաբյանի հետ միասին կազմակերպել ենք <<Հայաստանի Կարմիր գիրք>> գիտաուսումնական սեմինարը, որին մասնակցել են 9 Ա դասարանի աշակերտները:

Էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց լուսաբանությունը աշակերտական դիտանկյունից Բրազեկյան սեմինարը հենց այս նպատակն էր հետապնդում, որին մասնակցեցին Բջնանի Օրինու կենտրոնի համակարգողը, մի քանի ակտիվիստներ, իսկ վայրը պատահական չէր ընտրված՝ Բջնանի թիվ 1 հիմնական դպրոց:

Տեղեկատվության արդյունավետության բարձրացման գրավականները սեմինար, որին Մասնակցում էին Բջնանի վարժարանի աշակերտները:

2.5.2 Ձեռք բերված արդյունքներ:

Վերոնշյալ սեմինարների ընթացքում խոսեցինք ինչպես գլոբալ, այնպես էլ լոկալ էկոխնդիրների մասին, իսկ հարցերի միջոցով փորձեցինք ամփոփել աշակերտների վերաբերմունքը հիշյալ խնդիրների վերաբերյալ:

3. Ծրագրի ֆինանսական հաշվետվություն: /կարող էք տեսնել կից ֆայլով/
4. Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:
 - ԵԱՀԿ
 - Մարզպետարաններ
 - Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/
 - Նախարարություններ
 - ՀԿ-ր
 - Քաղաքացիներ
 - ԶԼՄ-ներ
5. Ծրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ
Ծրագիրն, ըստ էության, գործիքների և աշխատանքի մեծ հնարավորություն է տալիս բնակչության մեջ էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ վերաբերմունքի բարձրացման, գործունեության դաշտերի գնահատման շուրջ, և շարունակական ընթացքի պայմաններում այն կարող է բավական լուրջ արդյունքներ գրանցել:
6. Ծրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:
Ծրագրի շրջանակներում ի հայտ են գալիս նաև դժվարություններ, որոնք ևս ունեն լուրջ և գլոբալ բնույթ, որը հիմնականում պայմանավորված է պետական կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների գործունեության դաշտերի էթիկետային թյուր ըմբռնումներից:
7. Ծրագրի գնահատում և շարունակականություն
Ծրագրի վեցամսյա իրականացման ընթացքում արդեն նկատելի են որոշ դրական տեղաշարժեր և շարունակականության պարագայում կարելի է միանշանակ համոզմունք հայտնել, որ էկոկրթված հասարակություն ունենալու ցանկությունը մոտ ապագայում կդառնա իրականություն:

8. Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ: /կարող եք տեսնել կլից ֆայլով, այսինքն այստեղ կցելու եք Ձեր Statistics Excel-ի ֆայլը//

9. Հաշվետվությանը կլից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):

http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=featured&Itemid=388&lang=am

Օրհուս Կենտրոնի համակարգող Դավիթ Ղազարյան

E:mail. david.ghazaryan.83@mail.ru

Հեռ: 077609000

093007010